

**Նախագահ
Հենրի Բ. Այրինգ**
Առաջին
Նախագահության
երկրորդ
խորհրդական

# Նա հարությո՛ւն առավ

Հիսուս Քրիստոսի **Հարությունը** մեզ հույս է տալիս: Այն ինձ հույս տվեց 1969 թվականի մի ամառային օր, երբ իմ մայրը մահացավ: Ես տխուր էի, քանի որ ժամանակավորապես բաժանվել էի նրանից:

Բայց ես ուրախացա, երբ Սուրբ Հոգին ասաց ինձ, որ Հարությունն իրական է: Ես կարող եմ պատկերացնել, թե ինչպիսին կլինի իմ հանդիպումը մայրիկիս և մյուս սիրելիներիս հետ մի օր:

Հիսուս Քրիստոսը հարություն առավ: Նրա շնորհիվ Երկնային Հոր բոլոր զավակները, ովքեր ծնվել են այս աշխարհում, հարություն կառնեն այնպիսի մարմնով, որը երբեք չի մահանա:

**Հարություն.** Երբ Հիսուսի հոգին մահից հետո վերադարձավ Նրա մարմնի մեջ: Հիսուսի շնորհիվ բոլորը, ովքեր մահացել են, նույնպես հարություն կառնեն մի օր:

## Զատիկի պատմությունը

Կտրտեք քարտերը և փակցրեք դրանք թղթի վրա: Դակեք անցքերը և թելով միացրեք քարտերը: Այժմ դուք ունեք Զատիկի պատմությունների գիրքը:

*Հարմարեցված է «Նա հարություն առավ» հոդվածից,* Լիահոնա, *մայիս 2013, 4–5:*

● **Տես** ***Եկ, հետևիր Ինձ*****. Վարդապետություն և Ուխտեր 29 և Զատիկի համար**

«Ես վկայում եմ, որ Հիսուսը հարություն առած Քրիստոսն է, մեր Փրկիչը, կատարյալ օրինակը և հավերժական կյանքի առաջնորդը»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ



**1.** Հիսուս Քրիստոսը մտավ Երուսաղեմ ավանակի վրա նստած: Մարդիկ գովաբանում էին Նրան և արմավենու ճյուղեր էին փռում գետնին: (Տես Մարկոս 11.1–11)



**2.** Հիսուսը այցելեց տաճարը: Նա բժշկեց մարդկանց, ովքեր կաղ էին և կույր: (Տես Մատթեոս 21.12–14)



**3.** Չար քահանաները Հիսուս Քրիստոսի աշակերտներից մեկին՝ Հուդա Իսկարիովտացուն, վճարեցին 30 արծաթ, որպեսզի Հիսուսին հանձնի իրենց: (Տես Մատթեոս 26.14–16)



**4.** Հիսուսը Իր աշակերտների հետ կերավ Զատիկի ուտելիքը: Հիսուսը տվեց նրանց հաղորդությունը, որպեսզի օգնի հիշել Իրեն: (Տես Մատթեոս 26.19, 26–28)



**5.** Հիսուսը գնաց Գեթսեմանի, որպեսզի աղոթի Երկնային Հորը: Այնտեղ Նա սկսեց տանջվել մեր մեղքերի համար: Սրերով մարդիկ եկան և բռնեցին Նրան: (Տես Մատթեոս 26.36–50)



**6.** Հիսուսը տառապեց և մահացավ խաչի վրա: Նրա մարմինը դրեցին գերեզմանի մեջ և մի մեծ քար գլորեցին դռան առաջ: (Տես Մատթեոս 27.27, 57–60)



**7.** Հրեշտակները գլորեցին և հեռացրին քարը: Նրանք ասացին Մարիամ Մագդաղենացուն և մյուս կանանց, որ Հիսուսը հարություն է առել: Հիսուսը հայտնվեց կանանց, և նրանք երկրպագեցին Նրան: (Տես Մատթեոս 28.1–10:)



**8.** Հիսուսը հայտնվեց Իր աշակերտներին: Նրանք շոշափեցին Նրա հարություն առած մարմինը: Նա պատվիրեց նրանց, որ բոլորին ուսուցանեն Իր ավետարանը: Հիսուս Քրիստոսը կրկին հարություն առավ, մենք նույնպես հարություն կառնենք: (Տես Ղուկաս 24.36–43, Մատթեոս 28.16–20:)

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍՏԵՓԱՆԻԱ ՌՈԴՐԻԳԵՍԻ